

ծոց կամ աղանդոց ։ Եզնիկը, կարծես, աւ զանդ է կոչում հեթանոս կրօնները և կամ փիլիսոփայական վարդապետութիւնները, իսկ հերձուած բառը վերապահում է քրիստոնեական եկեղեցու ծոցում տեղի ունեցած այլամիտ ուսմանցներին։

Մի տեղ Եզնիկին իր գրութիւնը անուանում է ձաւ։ «Որպէս բազում անգամ յորնագոյն օրինակօց ոչ մոռացար յառաջին ձասն առնել», էջ 144։ Իրաւացի կը լինէր կոչել Եզնիկի զործը ծառը յանեղիմանորեան ։ մի պարզ ու անպանոյն վերնազիր, որ թէ լեզուական և թէ իմաստի տեսակէտից միանգամայն պարտու պատշաճ է մեր հեղինակի ճաշակին։

Վերնազրի ինչդիրը շատ կարենոր էւսէ է. այստեղ է Մարիէսի աշխատութեան հանգայցը, այստեղ է այն նոր ջահը, որով ուզում է այլ լոյս սփոռել Եզնիկի զործի վերայ, Անտարակոյս, Մարիէսն առաջինն է, որ ուղիղ է հասկացել Եզնիկի երկի զանազան բաժիններին ներքին սերտ կապը, որի հետևանքով եղած կասկածները բնագրի պակասաւորութեան և կամ խառնակութեան մասին ընդմիշտ ընկնում են իրը անհիմ ենթադրութիւններ։ Չորս զիրքը իրենց զանազան մասերով կազմում են մի ամրողջութիւն։ Ջենց կարող բնաւ համաձայնել, որ այդ ամրողջութեան անունը Յաղագ Աստուծոյ է։ Մարիէսի վերլուծական ամսագողութեան բան ամսատակն իսկ բողոքում է այս համացացողութեան դէմ։

Անվիճելի փաստ է, որ Եզնիկը կանգնած է պինդ անձնիշխանութեան սկզբունքի վերայ։ Նորա բարձրութիւնից դիտում է կեանքի բացասական երեւյնները, այն ինչ որ կոչում ենք չարիք, լինի ժողովրդական մնապաշտութեան և հաւատալիքների աշխարհում, թէ օտար վարդապետութիւնների և աշխարհայեցողութիւնների մէջ, ըննում է և բացատրում է բոլորը նոյն անձնիշխանութեան, անհատական ազատութեան, սկզբունքով։ Եզնիկի ապագայ հրատարակչին կարող էինց յանձնարարել ձԱՄՒԹ ԱԱՆԴԻՄԱԱՆԻԹԵԱԼ գլխագիրը։

(Ճարայարելի)

Գրու. Ն. Առնուծ

ԼԵԶՈՒԱՐԴԻՑԱԿԱՆ

ՀԱՅԵՐԵՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

ԱԿԱԱՐԱՆ ԳՐԱՑ ՄԷՋ

(Հին Կոտակ. Վ. Անեա. 1896, Նոր Կոտակ. Վ. Անեա. 1898)

1. ԱՅԻՀՈՐԾ

Այս յայնմ ժամանակի նեղեսցի վիշտապն և յառաջնորդաց իւր բրոննեցի և յանկէորդացն կապեսցի, և մի ոք ընկալցի զնա, զի ենեղ զարին սրբոցն ի բաղացս և ի զաւառս (Հին կտ. էջ 394)։

Անձանօթ և թերեւս սիսալազիր նորաշիտ բառ, որուն իմաստն անյայտ է. բայց սասանորդ բառին յարադրութենէն կը հասկցուի որ ասոր մերծաւոր նշանակութիւն մը ունենալու է։

2. ամբան

Ընդէր տրտում նստեալ կայք աստղատարկ անբան (Նոր կտ. էջ 90)։

Գատարկ բառին հոմանիշն է և կը նըշանակէ «անգործ»։ Կազմուած է բան բառին ուամկական «զործ» առումէն։ Կը գտնենք նաև նոր գաւառականներուն մէջ, ինչպէս Եւդոկիա, Երևան, Զէյթուն, Նոր - Բայազիտ։

3. Բարձրահամ

Ծնդ ահեղ և ընդ զարմանալի ճանապարհն, ընդ անձուկ կապանս և ընդ

1. Մարկոսի յանդիմանութիւնն յառաջարանում, որ է նախորդ, իրուզու, զրծի վերէին երկու էջ, նեղնակը կործն թէ հարց շըլում է աստուծոյ էռթեամ, յարաարաբելով, «ասա ցուցոց թէ ով է աստուծ և զին նորա արարածց»։ Սակայն և այս հանգամանցը կայում է մասն մի բան, որ նեղը զանազան երկերի առաքութեա, իմարդապեհն է, ինչ որ պիտի տեսնենց։ Համարովն Մարկոսի հնրգում այլ տեղից է վերցած, և անմիջանաւթեան զի վերայ յարմար, ձևականորքն պատշաճ տեղ չի գտնէ։

բարձրահամ լեռունս անցուցանեն (Հին կտ. էջ 301):

Խմաստն է «բարձր, բարձրաթերթ»։ բայց համ բառին բարդութիւնը անպատճեն է։ ըստ իս պէտք է ուղղել բարձրահամա։ սխալը նոյն է ինչ որ շերտամ - շերտը գրչութեանց մէջ։

4. Բղեջնափոխ

Թուրքիթ լեռթուլասի Հառվմայեցի բգեշ-խափոխին՝ որ է պրօկուլին, զոր գրեալ է նա, հեթանոս զոլով դատաւոր ի Հրէաս-տան (Նոր կտ. էջ 381):

Կը նշանակէ քրդշխի փոխանորդ, փոխ-հիւպատոս»¹ և կը համապատասխանէ Ա. Դրբի փոխանակ բղեյինի ձեին։

5. Բէթ

Եւ տային մեզ հանապազ զզրուանս ցորենոյ երկերիւր, և ձիթոյ լափրէրս հինգ-հարիւր, և զինոյ հազար և հինգ հարիւր (Հին կտ. էջ 83):

Ըստ իս իրարէն բաժնելով՝ պէտք է զրել և ձիրոյ լափի բերս հինգհարիւր։

Բերը չափի մը անոնչ է։ Նոյն բառը կը գտնենք նաև կիւրդ. Թգ. «Բնիսեայ իւրոյ մզելոյ. բեթն չափ իմն է մզելոյ, զի մի՞ որ համարեացի թէ զպաղոյն ասիցէ և ոչ զձիթոյն»։ Հեղինակին բացատրութիւնը բաւական պարզ է. ըսել կ'ուզէ թէ բեթը հեղուկներու չափ մ'է և ոչ թէ հաստատուն մարմիններու. բեթ բառը գործածուած է, կ'ըսէ, հասկցնելու համար թէ խնդիրը ձեթի մասին է և ոչ թէ ձիթապը-տուղի որովհետև ձիթապտուղը իրը հաս-տատուն մարմին՝ կարելի չէր բէթ հեղու-կաչափով կշոել. Այս բոլորը անոր հա-մար է որ երբ. զայէ կը նշանակէ ոչ միայն ձիթապտուղ, այլ և ձիթինի և ձի-թափուզ. բուն նշանակութիւնը ցովի բա-ռերէն միայն կարելի է հասկնալ։

1. Ինչպէս որ պրօկուլը բան արդին յայտնապէս կ'ըսէ, որ պատաղ ձեւ է proconsulին,

Մ. Խ.

Նոր Հայկ. Բառ (և ասոր հետեւելով նաև Առմենաց) չհասկնալով կիւրդի բա-ցատրութիւնները, բեր կը մնկնեն «իւղ մզեալ, բամած ձէթ»։

Վերի Նոր վկայութիւնը կը հաստատէ «հեղուկաչափ» նշանակութիւնը։ Փոխա-սեալ է երբ. Ո՛վ եաթ բառէն, որ է հե-ղուկներու չափ մը։

6. Գնդապանոյն

-Ոհա ի բաց մերժեցի յինչն զթագա-ւորական զգեստն, զրեհեզ, զզնդապանոյնն և զուկենուռն, և զգեցայ զհանդերձ սրբյ (Հին կտ. 171):

Կը նշանակէ զնդակներով կամ զնդա-ձեւ զարդերով զարդարուած (տեսակ մը զգեստ)։

7. Դաստակ:

Խորհեցաւ արկանել զձեռն իւր ի դաս-տակն սրոյ իւրոյ և ձգել զնա ի պա-տենից իւրոյ (Հին կտ. 191):

Կը նշանակէ «դաստապան, սուրբ կոթ», ինչպէս որ երկրորդ ձեռագիր մը ունի արգն դաստապան, բայց պէտք չէ կարծել թէ իսաւալ զրչութիւն մը ըլլայ, այլ հին հայերէն բառ է և կու զայ պհէ. дастակ «կոթ», պր. դաստա «կոթ, բնասեղ, սուրբ՝ զաշոնի՝ դանակի՝ կացինի եւն կոթ» բառէն։ Գործածուած է նաև Մազ. քեր. 246 (Տրատ. Ն. Աղոնց, Արուեստ Դիմոնիսեայ քերականի)։ Իւրու զդաստակ ինչ սրոյ՝ որ ի գործ արկանէ։

8. Դատիկնիս

Իւրեւ եղեւ զաւակն աւուրս երիս՝ հրա-մայեաց մանկաբարձին լուանալ զնա և զնել զատիկնիսն պատուվ (Նոր կտ. 5):

Հրատարակիչը այս բառը կը համարէ «թիւրմս զաշտիշն», որ նշանակէ կռնք։ Բայց մանուկը լուալէն յետոյ չէ՛ որ կը զնեն կոնքի մէջ, Ասիկա ըստ իս դատի-կնել բառն է, բայց հոս կը նշանակէ «պա-տըշպամ»։

9. Երեքաւորեալ

Վիշտապն հալածեսցէ զայլազդին, և այլազդին որ անուանեալ կոչի Սաղամանդար՝ ի փախուստ դարձցի, դարձուցեալ զերեսս իւր ի կզզիս ունի և արձաթ և ականս պատուականս և պսակց գաւազանցն առեալ յազգէ Պարսից ի կարբեզովի, ոչ որ կ զոտ զալանին երեցաւրեալ յազգէ Պարսից ի կարբեզովի, ոչ որ կ հալածեսցէ զնա (Հին Կտ. 244):

Ինձ կը թուի թէ պէտք է ուղղել երեւատրիայ, հմմտ, երեսաւր «բաջ պատերազմիկ»:

10. Լաղմ

Փորեցին լադմ ծածուկ և թագուցին անդ այլ մի կրակով և եղին ծծումը ի ներբռյ ողջակիզեաց փայտին (Հին Կտ. 339):

Ինչպէս հրատարակիչն ալ կը ծանօթագրէ, թթք. լաղմ «ական» բառն է:

11. Խելք

Ի վերնատուն մի ժողովեալ էին, և էք բարձրութիւն նորա կարի մեծ յոյժ... և մանուկ մի ննջէր ի յեզրն ի խելս տանն. և յանկարծակի յափշտակեալ զնա ցուն թանձրութեան, անկեալ ի բարձրութենէ անտի (Նոր Կտ. 152):

Խելք տոմ կը նշանակէ «տան կտուրը». բարկն այս առումին համար հմմտ. Խելք կամրչին. Ազաթ. - Խելք նաւու Մրկ. դ. 38:

12. Խոնացետ

Կոչեցեալ խոհապետին զվաճառականս և խնդրեաց զիս ի նոցանէ զնոյ (Հին Կտ. 141):

Խոսքը Փարաւոնի տաճարապետին համար է. հոս կը նշանակէ «խոհարարապետ»:

13. Ծաղ.

Անկ. զիրք Հին Կտ. էջ 178 և 180 բանիցս կը յիշուի մեղուներու փեթակի

մաղք, այն է մեղրահաց, ձեռագիրներէն մէկը (Ա) այս բոլոր պարագաներուն ալ կը զրէ ծող (Հմմտ. էջ 180 ծան): Կաշելի՞ է այս բոլորը գրչազրական սիալ համարել, թէ պէտք է կարծել որ կար նաւե ծող բառ մը՝ «մեղրահաց» նշանակութեամբ. հմմտ, ծող «խմորեղէն» թակ. Փիլիպ. էջ 469, ծաղորուր «խմորեղէն շնոնդ» թակ. մ. գ. 17:

14. Կալսմին

Ցէր Աստուած հրամայեաց տալ նմա չորք իրք, որ են այսորիկ, կրաւկոն՝ որ է զափարան (Քրցում) և նարգուն՝ որ է փայլասենի, կալամոն՝ որ է եղէզն, և կինամոն՝ որ է զասենի (Հին Կտ. 14): Յն, չալարօս «եղէզ» բառին հայցականն է:

15. Կնեայպարնոյն

Եւ փութացաւ Ասանէթ և զգեցաւ ըզպատմուճանն բեհեղեայ՝ յաւկոյ կծնայպամուն և ած զզտին ոսկեղէն ընդ մէջ իւր (Հին Կտ. 156):

Խնդրական բառին տեղ դ ձեռազիրն ունի կինապամոյն, Ա ձեռազիրը յակերապամոյն, Ամիկա կը ցուցինէ որ բառը կը նշանակէ «թանկազին բարերով զարդարուած»: Բառու կը ծագի կիմ (կոմ) արձատէն, որ այլուստ յայտնի է «մարմարին» նշանակութեամբ, բայց մեր ձեռազին մէջ կը նշանակէ «մոզայիրի մանր բար»: Հմմտ. անդ՝ էջ 153, 154, 172 գրծ. կինճինք, կնջիւք, կնջին, կնայովք, կնճայիօց: Ասոնց մէջ բառին ուղ. ձեւն է կիճճ, որուն հսկ նոյն կու զայ լուսի և Ղագախի գաւառականներով կիճճ «մանր բար»:

16. Կշտի բռնել

Ակիզրն արար խաղալ ընդ եղբօրն իւր և արար զօտամարախի և կշտի բռնել փորձիւ, զի տեսցէ յուժն իւր՝ յաղթել կարէ

զնա . բանզի որ կշտի բռնեցին՝ վայր
անկաւ և ոչ կարաց յաղթել (Հին Կտ.
316):

Կը նշանակէ «ըմբշամարտիկ» թարգ-
մանաբար կազմուած է պրս. կուտի ցի-
րիտառ հոմանիշն, որ բռն կը նշանակէ
«կուշտը՝ կողը բռնել», ինչպէս որ գու.
ռնինք կող բռնել:

17. Հալլոյի

Երթունք իւր որպէս զվարդ փթթեալ՝
յորժամ ի հակուկացն ի դուրս վազէ (Հին
Կտ. 183):

Անտոռյգ բառ. կամ կը նշանակէ «կո-
կոն» և կամ պէտք է կարդալ բակոյի՝
առնելով» ծաղկաւան, թաղար» իմաստով:

18. Հիւթ

Գնացուց ի զիշերիս և դարանակալ
լիցուց ի ճանապարհին և թագիցուց ի
հիւթու եղեգանն . . . Եւ թագեան ի մէջ
հիւթու եղեգանն (Հին Կտ. էջ 192, տող
3 և 14). Երթայց դուրս ի հիւթու եղե-
գանդ (էջ 196): Եւ նորա էին ի պուրակ
հիւթու եղեգանն (էջ 197):

Առաջին վկայութեան մէջ Ա. ձեռազգին
ունի ի խիր եղեգանն, երկրորդին մէջ իւր-
բոցն, երրորդին մէջ ի տեղի, իսկ չորրոր-
դին մէջ տարրերութիւն չ' լնծայեր. այս-
պէս ուրեմն հիր ընթերցուածը կը հաս-
տատուի:

Նշանակութիւնն է, ինչպէս տեղէն կ' ե-
րեայ, «Բաւուտ, խարձ»:

19. Մանասրուսնք

Այսպիսի պահապանը կան շուրջ գա-
թոռոյ աստուածութեանն : Կայանը են,
մանասրուսնը են, խոռոչը են, հրեղէնց
են, կամարազգեստը են, լապտերը են (Հին
Կտ. 302):

Կայանը բառին մերձանիշ ըլլալու է,
բայց բռն նշանակութիւնը և կազմութիւնը
անձանօթ է:

20. Անկն

Եւ պատանին հանեալ զգեստ հանդերձի
իւրոյ՝ մերկացաւ: Եւ հրամայեաց ման-
կանցն մեկն տարածել ի վերայ երկրի
(Նոր Կտ. 227):

Զեապիրը ունի մեկն. հրատարակիչը
կը որբազրէ մերի, բայց կրնանց նաեւ
ընդունիլ մեկն ձեւը, որ կը նշանակէ
« փուռած, տարածուած », իրբեւ մեկնել
բային արմատը: Նոյն ձեւը այլուր կը
գտնենց «պարզ» նշանակութեամբ (Լմբ.
Ներք. Համբ. 1865, էջ 269): Դժբախ-
տարար Անկանոն զրբի միւս օրինակին
համապատասխան տեղը (էջ 107) ինդրա-
կան բառը կը պակսի:

21. Նետալար

ՑԱղեցսանդրի յուզմունց պատերազմի
բազում եղիցին և պարանոց ստահակու-
թեան նորա մինչ ի նետալարս պարըս-
պաց նորա. իշխանց նորա հալածեսցին
(Հին Կտ. 138):

Թերեւս սխալ զըշութեամբ իմաստն
անյայտ բառ:

22. Շաղլանալ

Աշը նորա շաղլացեալ էին ի լալոյ
(Հին Կտ. 220):

Կը նշանակէ « աչքերը շատ լալէն աւ-
բուի, շաղի կամ դիակ զանալ », ինչ-
պէս կը ցուցնէ նոյն պատմութեան երկրորդ
օրինակը, « Աշը նորա էին իրբեւ զշաղի
ի լալոյն » (անդ, սինակ թ):

23. Սափ

Խմաստուն, քաղցածաղր, տեսանող,
խորհրդական, սափ, հեզ, հանդարտ (Հին
Կտ. 398):

Ալար, սափ Տհմ բառն է, որ կը նշա-
նակէ « մաքուր, վճիտ, պարզ »:

24. Վանութի

Սորա վանուհիք էին և ի պոռնկութիւն
ընթացան (Նոր Կտ. 410):

կը նշանակէ «կրօնաւորուհի»:

25. Վլտանգ.

Աղքատ եմ յոյժ և տնանկ զոլով և վտանկ մարմաղի... Տնասնես զիս որ այսպէս վտանկ եմ և ոչ կարեմ կանգնել... Ոչ տեսեալ որ զայսպիսի վտանկս կարող իցէ մարդ զեղով ողջացուցանել (Նոր կտ. 229-230):

Նոր առում մ'է միայն և կը նշանակէ «հիւանդ»:

26. Տախտակ

Եւ էին ի նմա ոսկի տախտակն հաստատեալ ի սենեկին որ հայէր ընդ պատուհանն յանդիման յարենէլիք. և էր տախտակն զարդարեալ անկողնօց ծիրան(ե)օք և սոկեթելոց... և յայն տախտակին ննջէր Ասանէթ (Հին կտ. 154-5):

Կը նշանակէ «մահճակալ». կովկսանեան բարբառներու տախտոն է. ձեռազիրներէն երկուցը վերջին անգամին արդէն ունին տախտու:

27. Տարեկան

Ոչ կամեցաւ մնալ, ընդ նոսա և կամ տանիլ զնոսա՝ պատճառելով զտարեկանս երկրին Մեր երկրի հացն տարեկան է, ասէ, թէ ուսէ մարդ փորացաւ լինի և ոչ կարէ (Հին կտ. 348):

Կը զնոսի շատ գաւառականներու մէջ և կը նշանակէ «հաճար»:

28. Տիեզրուցանել

Հարսութիւն ըս և փառը ըս տիեզրուցին զբեզ ի լինել զեզ հպարտ և ամբարտաւան (Հին կտ. էջ 394):

Հրատարակիչը բառը կը սրբազրէ տըիւրեցոյին. ասկայն ասիկա ամենակին չի յարմարիր տեղին. պէտք է հասկնալ տըլցուցին «զրդեցին, զրգուցին, շարժեցին», իբրև անցողականը տղի «շարժել» հա-

զուազիւտ բային, որու վրայ խօսած եմ Հայ. նոր բառեր Ցիմեթ. կուզի մէջ, էջ 102:

29. Փայլասենի

Վկայութիւնը տե՞ս թ. 14, ուր և բատորուած է իբր «նարդոս». հմմտ, նաև Հայրուսակ § 3035:

30. Քամատարաց

Եւ բարկացաւ Տէր ի վերայ կայենի, ափ մի հողոյ նման բամատարաց՝ զամենայն հունաման կայենի ցորենեացն՝ ցրուեաց (Հին կտ. 315):

Կը նշանակէ «քամիէն տարուած» ցանուցիր եղած ։ ուղղելի է քամատարած։

Հ. Ապահաւ

Գ. Բ. Ա. կ. Ա. ն.

ԱՆՏԻՊ ՔԵՐԹՈՒԱԾ ՄՐ

□ * □

Այս ակտուան տակ կը ներկայացնենց հոս մեր ականուոր Սկիթարեան Արեալիսկառուի մեղածորան ցրէն ընած զորաբեկ թրթուած մը, որ ճշշ այս ամսուու կը ըսլորէ իր ծննդեան յիսներորդ տարին: Պայս կը հրատարակնց նախնամինդիր ոգով մը, որ չիորուուի անոր հոգիէն՝ անոր ժամցն ոչ մէկ շունչ, ոչ մէկ կայժ: ԽՄԲ.

Ի ՀԱՆԴԵՍ ՈՒ ԽԸ

Երկուցուց մերոց Ապահաւանեան և Ստեփանեան
նորընճայից

Ն Ո Ւ Ա. Ք

○

Հոգիահրաշ յափշտակեալ ի Սալիմ,
Տեսի զգբրկիւն մեր անկեալ ընդ բեռամբ
իտաշփայտին՝ զօր ի տեղին կառափաման
Ածէր յուսի, հրաւիրելով օգնութիւն:

Հոսէր ընդ քիրտն առուին արիւն պատուական
Տեսի զհանդերացը թաթաւեալ ի բոսոր.